

# ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2016

## ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

### ԹԵՍՏ 7

Խմբի համարը

Նստարանի համարը

#### Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

**Ցանկանում ենք հաջողություն:**

## Ա մակարդակ

1 Նկարում պատկերված է.

- 1) տեղումնաչափ
- 2) ձայնախորաչափ
- 3) խոնավաչափ
- 4) ճնշաչափ



2 Որքան է երկու կետերի միջև իրական հեռավորությունը, եթե նրանք միևնույն միջօրեականի վրա են և միմյանցից հեռացված են  $178^\circ$ .

- 1) 3663 կմ
- 2) 10440 կմ
- 3) 20202 կմ
- 4) 19758 կմ

3 Երկու կետերի հեռավորությունը գլոբուսի վրա 7,6 սմ է, իսկ իրականում՝ 2280 կմ: Ի՞նչ մասշտաբ ունի գլոբուսը.

- 1) 1 : 30 000 000
- 2) 1 : 3 000 000
- 3) 1 : 30 000
- 4) 1 : 300 000

4 Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Սկզբնական միջօրեականը ամենաերկար միջօրեականն է:
- 2) Հասարակածն ամենակարճ գուգահեռականն է:
- 3) Երկրագունդը պտտվում է Լուսնի շուրջը:
- 4) Հասարակածային շառավիղը բևեռայինից երկար է:

5 Ի՞նչն է բնորոշ տայգային.

- 1) պողոզոլային հողերը
- 2) լայնատերև ծառերը
- 3) անբավարար խոնավությունը
- 4) գորշ անտառային հողերը

6

Պարբերաբար տաք ջուր և գոլորշի շատրվանող աղբյուրը կոչվում է.

- 1) գեյզեր
- 2) ցունամի
- 3) մագմա
- 4) լավա

7

Միատեսակ ջերմության և խոնավության հասկանիշներով օժտված ներքնալորտի մեծածավալ օղբ, որը ձևավորվում է միասեռ ընդարձակ տարածքի վրա, կոչվում է.

- 1) մթնոլորտ
- 2) օդային գանգված
- 3) վերնոլորտ
- 4) մթնոլորտային ճնշում

8


Լեռան ստորոտին մթնոլորտային ճնշումը 680 մմ ս. ս. է, իսկ գագաթին՝ 440 մմ ս. ս.: Լեռան հարաբերական բարձրությունը կլինի.

- 1) 1020 մ
- 2) 1400 մ
- 3) 1120 մ
- 4) 2400 մ

9

Նկարում պատկերված է.

- 1) նավթամուղ
- 2) գազամուղ
- 3) խճուղի
- 4) երկաթուղի



10

Ո՞ր քամիներն են պատկերված նկարում.

- 1) մուսսոններ
- 2) լեռնահովտային
- 3) բրիզներ
- 4) պասսատներ



11

Ո՞ր թերակղզիներն են բարեխառն գոտում.

- 1) Այյասկա և Կամչատկա
- 2) Քեյփ Յորք և Առնեմլենդ
- 3) Կալիֆոռնիա և Ֆլորիդա
- 4) Թայմիր և Չուկոտյան

12

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Պարսից ծոցը Օմանի ծոցից բաժանվում է Բոսֆորի նեղուցով:
- 2) Աշխարհում մակընթացության ամենաբարձր ալիքը գրանցվել է Հուդզոնի ծոցում:
- 3) Բիսկայան ծոցի ջրերը ողողում են Պիրենեյան թերակղզու հարավային ափերը:
- 4) Մեծ Ավստրալական և Կարպենտարիա ծոցերը պատկանում են Հնդկական օվկիանոսի ավազանին:

13

Բնութագրումով որոշել նեղուցը.

*Այդ նեղուցը միացնում է երկու օվկիանոս և անջատում է Հրո երկիր կղզին մայրցամաքից: Ո՞ր նեղուցն է.*

- 1) Թորեսի
- 2) Մագելանի
- 3) Բերինգի
- 4) Կուկի

14

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Կուր–Արաքսյան հարթավայրն առաջացել է պլատֆորմի վրա:
- 2) Դրակոնյան լեռները հին են և քայքայված:
- 3) Սկանդինավյան լեռներն առաջացել են ալպյան լեռնակազմության ժամանակ:
- 4) Վերխոյանսկի և Չերսկու լեռները Խաղաղօվկիանոսյան գեոսինկլինալային գոտում են:

15

**Ո՞ր պնդումն է ճիշտ.**

- 1) Անտարկտիդայում տարվա մեծ մասն անհողմ եղանակներ են, որը նպաստում է արեգակնային ջերմության գրեթե 90 %-ի կլանմանը սառցածածկ մակերևույթի կողմից:
- 2) Չնայած հյուսիսից հարավ մեծ ձգվածությանը՝ Հյուսիսային Ամերիկայում ձևավորվել է կլիմայական չորս գոտի:
- 3) Հարավային Ամերիկայի արևելյան ափամերձ Ֆոլկլենդյան տաք հոսանքի ազդեցությամբ Պատագոնիայի կլիման բարեխառն ծովային է:
- 4) Հասարակածային մուսսոնների տեսքով պասսատները, թափանցելով Հյուսիսային Ավստրալիա, առաջացնում են առատ տեղումներ:

16

**Ո՞ր ծովային հոսանքներն են ազդում Եվրասիայի կլիմայի ձևավորման վրա.**

- 1) Հյուսիսատլանտյան և Մուսսոնային
- 2) Բրազիլական և Պերուական
- 3) Գվինեական և Բենգելյան
- 4) Գվիանական և Գոլֆստրիմ

17

**Ո՞ր կղզու (կղզիների) ափերի մոտով է անցնում օվկիանոսային տաք հոսանք.**

- 1) Ֆոլկլենդյան
- 2) Կուրիլյան
- 3) Կանարյան
- 4) Մեծ Բրիտանիա


18

**Անապատների ո՞ր զույգն է հարավային կիսագնդի արևադարձային կլիմայական գոտու սահմաններում.**

- 1) Ռուբ Էլ Խալի և Լիբիական
- 2) Կալահարի և Ատակամա
- 3) Սահարա և Թար
- 4) Կարակում և Ավազային մեծ

19 Ո՞ր լիճն է քարտեզում նշված Դ տառով.

- 1) Ռուդոլֆ
- 2) Չադ
- 3) Տանգանիկա
- 4) Նյասա



20 Ո՞ր նավահանգիստն է քարտեզում նշված Ը տառով.

- 1) Ալեքսանդրիա
- 2) Քեյփթաուն
- 3) Ալժիր
- 4) Տրիպոլի

21

Բնակչության վերարտադրության երկրորդ տիպի երկրներում բարձր բնական աճը պայմանավորված չէ:

- 1) գյուղական բնակչության գերակշռությամբ
- 2) կրթական բարձր մակարդակով
- 3) կանանց տնտեսության մեջ ներգրավվածության ցածր աստիճանով
- 4) վաղ ամուսնություններով

22

Ռուսաստանի բնակչության սեռային կազմում մեծ է կանանց բաժինը: Ինչով է պայմանավորված Սիբիրում և Ուրալում տղամարդկանց համեմատաբար մեծ բաժինը.

- 1) տնտեսական մասնագիտացման բնույթով
- 2) ծնելիության մակարդակով
- 3) կյանքի միջին տևողությամբ
- 4) Երկրորդ աշխարհամարտի հետևանքներով

23

Բնութագրումով որոշել տարածաշրջանը.

*Այս տարածաշրջանը համաշխարհային երկու կրոնների՝ քրիստոնեության և մահմեդականության բնօրրանն է: Արդյունաբերության կառուցվածքում մեծ է արդյունահանող ճյուղերի բաժինը: Տարածաշրջանն աշխարհում առաջինն է փյունիկյան արմավի մշակությամբ: Ո՞րն է այդ տարածաշրջանը.*

- 1) Հարավարևմտյան Ասիա
- 2) Հարավարևելյան Ասիա
- 3) Հարավային Ասիա
- 4) Կենտրոնական Ասիա

24

Որքան է երկրի ուրբանիզացման մակարդակը, եթե նրա բնակչության թիվը 32 մլն է, քաղաքային բնակչության թիվը՝ 24 մլն.

- 1) 75 %
- 2) 60 %
- 3) 70 %
- 4) 85 %

25 Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Բնակչության միջին խտությունը տարածքի բնակեցման աստիճանն արտահայտող ցուցանիշ է:
- 2) Ճապոնիան, Հարավային Կորեան, Նիդերլանդները բնակչության ցածր խտություն ունեցող երկրներ են:
- 3) Աշխատանքային ռեսուրսների այն մասը, որը զբաղված է տնտեսության այս կամ այն ոլորտում, կոչվում է տնտեսապես ակտիվ բնակչություն:
- 4) Մարդկանց գրեթե 70 %-ն ապրում է երկրագնդի ցամաքային տարածքի 7%-ի վրա:

26 Տրված գույգերից որի՞ պետություններն են գտնվում Աֆրիկայում.

- 1) Եգիպտոս և Եմեն
- 2) Գանա և Թունիս
- 3) Հոնդուրաս և Գվատեմալա
- 4) Նեպալ և Բուրան

27 «Արտադրանք — արդյունաբերության ճյուղ» գույգերից ընտրել *սխալը*.

- 1) կաուչուկ — քիմիական արդյունաբերություն
- 2) պողպատ — մետաղաձուլություն
- 3) տրիկոտաժ — թեթև արդյունաբերություն
- 4) պլաստմասսա — մեքենաշինություն

28 Ռուսաստանի Դաշնության վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Դաշնային բացարձակ միապետություն է:
- 2) Ունիտար խորհրդարանական հանրապետություն է:
- 3) Դաշնային նախագահական հանրապետություն է:
- 4) Ունիտար սահմանադրական միապետություն է:

29 Հնդկերոպական լեզվաընտանիքին պատկանող լեզուներով են խոսում.

- 1) վրացիները և ադրբեջանցիները
- 2) արաբները և դազախները
- 3) էստոնացիները և ֆինները
- 4) պարսիկները և բուլղարները



30

«Պետություն — խոշորագույն քաղաք» գույգերից ընտրել ճիշտը.

- 1) Թուրքիա — Ստամբուլ
- 2) Բրազիլիա — Բրազիլիա
- 3) Ավստրալիա — Կանբերա
- 4) ԱՄՆ — Վաշինգտոն

31

Ընտրել «մետաղաձուլության ճյուղ — առաջատար երկիր» համապատասխանությունների ճիշտ շարքը.

- |                         |                       |
|-------------------------|-----------------------|
| 1. սև մետաղների ձուլում | ա. Ռուսաստան և Կանադա |
| 2. ալյումինի ձուլում    | բ. Չինաստան և Ճապոնիա |
| 3. պղնձի ձուլում        | գ. Մալայզիա և Բոլիվիա |
| 4. անագի ձուլում        | դ. ԱՄՆ և Չիլի         |
- 
- 1) 1-բ, 2-ա, 3-գ, 4-դ
  - 2) 1-ա, 2-դ, 3-գ, 4-բ
  - 3) 1-ա, 2-բ, 3-դ, 4-գ
  - 4) 1-բ, 2-ա, 3-դ, 4-գ

32

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Հրաբխային շրջաններում կառուցվում են երկրաջերմային էլեկտրակայաններ:
- 2) Համաշխարհային բեռնափոխադրումներում ամենամեծ բաժինն ունի երկաթուղային տրանսպորտը:
- 3) Քիմիական արդյունաբերությունն ունի անսպառ հումքային բազա:
- 4) Գերմանիայում մեքենաշինությունը տնտեսության մասնագիտացման ճյուղ է:

33

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Հրաբխային ծագման լճերը շատ են Ախալքալաքի սարահարթում:
- 2) Հայկական լեռնաշխարհի գետերն ունեն հիմնականում ձնաանձրևային և մասամբ ստորգետնյա սնում:
- 3) Հայկական լեռնաշխարհի գետերը հորդանում են առավելապես աշնանը:
- 4) Վանա լճի կղզիներից նշանավոր է Աղթամարը:

34

Արագածոտնի մարզում ոռոգովի հողագործության համար հիմք են հանդիսացել հետևյալ մայր ջրանցքները.


- 1) Նալբանդի և Լոռու
- 2) Արմավիրի և Շիրակի
- 3) Ստորին Հրազդանի և Կոտայքի
- 4) Թալինի և Արզնի-Շամիրամի

35) Տրվածներից առավել շատ քաղաքային բնակավայրեր ունեցող մարզն է.

- 1) Լոռին
- 2) Գեղարքունիքը
- 3) Սյունիքը
- 4) Շիրակը

36) Ո՞ր լեռնաշղթան է քարտեզում նշված Ա տառով.

- 1) Գուգարաց
- 2) Փամբակի
- 3) Բազումի
- 4) Շիրակի



37) Ո՞ր քաղաքն է քարտեզում նշված Ը տառով.

- 1) Մարալիկ
- 2) Թալին
- 3) Աշտարակ
- 4) Սպիտակ

38 Ո՞ր բնական ռեսուրսն է անսպառ.

- 1) անտառային
- 2) կլիմայական
- 3) հանքային
- 4) հողային

39 Կենդանական ռեսուրսների պահպանմանն ուղղված միջոցառում չէ.

- 1) որսի կարգավորումը
- 2) մթերատվության բարձրացումը
- 3) արգելոցների ստեղծումը
- 4) «Կարմիր գրքերի» ստեղծումը

40 Շրջակա միջավայրում՝ օդում, ջրում, հողում կամ սննդամթերքի մեջ վնասակար նյութի այն քանակությունը, որի ազդեցությունը որոշակի ժամանակահատվածում մարդու առողջության կամ սերունդների համար վտանգավոր չէ, կոչվում է.

- 1) սահմանային թույլատրելի խտություն
- 2) կանցերոզեն նյութ
- 3) ջերմոցային էֆեկտ
- 4) սմոգ

41 Գրել այն ժողովուրդների համարները, որոնց թիվն ավելի քան 100 մլն է.

- |                    |                 |
|--------------------|-----------------|
| 1) գերմանացիներ    | 5) ռուսներ      |
| 2) հինդուստանցիներ | 6) իտալացիներ   |
| 3) իսպանացիներ     | 7) անգլիացիներ  |
| 4) բենգալացիներ    | 8) ֆրանսիացիներ |

42 Գրել մոլիբդենի հանքանյութի արդյունահանման կենտրոնների համարները.

- |           |             |
|-----------|-------------|
| 1) Սոթք   | 5) Քաջարան  |
| 2) Ագարակ | 6) Կապան    |
| 3) Արարատ | 7) Շամլուղ  |
| 4) Ախթալա | 8) Ալավերդի |

43

Տրված են ծովային սառը հոսանքներ: Գրել Ատլանտյան օվկիանոսի ծովային հոսանքների համարները.

- |                |                  |
|----------------|------------------|
| 1) Ֆոլկլենդյան | 5) Բենգելյան     |
| 2) Լաբրադորյան | 6) Կանարյան      |
| 3) Պերուական   | 7) Օյա Սիո       |
| 4) Սոմալիի     | 8) Կալիֆոռնիական |

44

ՀՀ տրված բնակավայրերի համարները դասավորել արևոտ օրերի թվի աճման կարգով.

- 1) Մարտունի
- 2) Իջևան
- 3) Գյումրի

45

Աշխարհի անասնապահության վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Ոչխարաբուծությունը զարգանում է հզոր համալիրներում, որոնք կառուցվում են բնակչության խիտ բնակեցված շրջաններում:
- 2) Աշխարհում արտադրվող մսի 3/5-ը տալիս է խոզաբուծությունը:
- 3) Հյուսիսային Եվրոպայի երկրների գյուղատնտեսության համախառն արտադրանքում մեծ է անասնապահության բաժինը:
- 4) Անասնապահության առաջատար ճյուղերն են ոչխարաբուծությունը և թռչնաբուծությունը:
- 5) Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակով աշխարհում առաջին տեղում է Հնդկաստանը, որին հաջորդում են Բրազիլիան, Չինաստանը և ԱՄՆ-ն:
- 6) Խոզերի գլխաքանակով աշխարհում առաջատար տեղ են գրավում Հյուսիսային Աֆրիկան և Հարավարևմտյան Ասիան:

## Բ մակարդակ

46 Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Դեկտեմբերի 22-ը ձմեռային գիշերահավասարի օրն է:
- 2) Լոնդոնը առաջին ժամային գոտում է:
- 3) Դեկտեմբերի 22-ի կեսօրին Արեգակի ճառագայթներն ուղղահայաց ընկնում են հվ. լ.  $23^{\circ} 30'$ -ի վրա:
- 4) Երկրագունդը միջօրեականներով բաժանված է 15 ժամային գոտիների:

47 Լեռան գագաթին օդի ջերմաստիճանը  $-12^{\circ}$  է, իսկ նույն պահին ստորոտում՝  $+3^{\circ}$ : Օդի ճնշումը գագաթին 460 մմ է: Օդի ճնշումը լեռան ստորոտին կլինի (հաշվարկը կատարել  $6^{\circ}$ -ով).

- 1) 710 մմ
- 2) 760 մմ
- 3) 50 մմ
- 4) 300 մմ

48 Համաշխարհային օվկիանոսի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Յունամիի առաջացման հիմնական պատճառը մշտական ուղղություն ունեցող քամիներն են:
- 2) Ջրի ամենաբարձր ջերմաստիճանը դիտվել է Կորալյան ծովում:
- 3) Խաղաղ օվկիանոսի սառը հոսանքներից են Պերուականը և Օյասիոն:
- 4) Առավել մեծ աղիություն ունեն հասարակածային գոտու ջրերը:

49 Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Հարավային Ամերիկայի բարեխառն գոտու արևելյան մասը զբաղեցնում է չափավոր ցամաքային կլիմայի մարզը:
- 2) Հյուսիսային Ամերիկայի հարավային մասում ձևավորվել է մերձարևադարձային խոնավ կլիմայական մարզը:
- 3) Աֆրիկայի ծայր հյուսիսում է ձգվում մերձարևադարձային միջերկրածովային կլիմայական մարզը:
- 4) Ավստրալիայի ծայր արևելյան մասում աղեղնաձև ձգվում է արևադարձային խոնավ կլիմայի մարզը:

50 Ո՞ր գուգորությունն է ճիշտ.

- 1) Աֆրիկա — կամպոս — բառբար
- 2) Հարավային Ամերիկա — սելվաս — հնեա
- 3) Եվրասիա — պամպա — ֆիկուս
- 4) Հյուսիսային Ամերիկա — տունդրա — էվկալիպտ

51 Նախագահական հանրապետություններ են.

- 1) Թուրքիան և Իսպանիան
- 2) Բրազիլիան և ԱՄՆ-ը
- 3) Հնդկաստանը և Գերմանիան
- 4) Ճապոնիան և Իտալիան

52 Անագի ձուլմամբ առաջատար երկրներ են.

- 1) Ինդոնեզիան և Մալայզիան
- 2) Գերմանիան և Ֆրանսիան
- 3) Ճապոնիան և Չինաստանը
- 4) Իրանը և Հնդկաստանը

53 Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Միջերկրածովյան երկրները մասնագիտանում են ձիթապտղի մշակությամբ:
- 2) Վուշը հիմնական թելատու մշակաբույսն է և տարածված է արևադարձային գոտու երկրներում:
- 3) Շաքարի ճակնդեղի մշակության հիմնական շրջանները բարեխառն գոտում են:
- 4) Շաքարեղեգը ջերմասեր բույս է և հիմնականում տարածված է ջերմային տաք գոտում:

54 Իտալիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Բնակչության մեծամասնությունը դավանում է քրիստոնեության բողոքական ուղղությունը:
- 2) Խոշոր քաղաքներից են Թուրուզը և Միլանը:
- 3) Ըստ պետական կարգի՝ նախագահական հանրապետություն է:
- 4) Բնակչությունն ունի միատարր ազգային կազմ:

55

**Բնութագրումով որոշել տարածաշրջանը.**

*Այս տարածաշրջանի հյուսիսում տարածվում են բարձր լեռներ: Ընդերքը հարուստ է երկաթաքարի, քարածխի, մանգանի, քրոմի պաշարներով: Այստեղ է ծագել համաշխարհային կրոններից ամենաերիտասարդը՝ բուդդայականությունը: Տարածաշրջանն աչքի է ընկնում բնակչության բարձր խտությամբ: Ո՞րն է այդ տարածաշրջանը.*

- 1) Հարավարևմտյան Ասիան
- 2) Հարավարևելյան Ասիան
- 3) Հարավային Ասիան
- 4) Կենտրոնական Ասիան

56

**Հայկական լեռնաշխարհի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.**

- 1) Հյուսիսում՝ Սև ծովի ափին գուգահեռ, ավելի քան 500 կմ երկարությամբ ձգվում է Ներքին Տավրոսի լեռնային համակարգը:
- 2) Հարավային մասում՝ Միջագետքի ցածրադիր հարթավայրի հարևանությամբ, բարձրանում է Հայկական Տավրոսի լեռնաշղթան:
- 3) Արևելքից եզրավորվում է Փոքր Կովկասի լեռնային համակարգի լեռներով:
- 4) Հարավ-արևելքում է Սավալան հրաբխային վիթխարի գանգվածը:

57

**ՀՀ-ում ամենաքիչ տեղումները լինում են.**

- 1) միջին բարձրության լեռնային գոտիներում
- 2) բարձրադիր լեռնային գոտում
- 3) եզրային լեռնաշղթաների հողմահայաց լանջերին
- 4) միջլեռնային գոգավորություններում

58

**Երկաթուղային հանգույցներ են.**

- 1) Արմավիրը և Արտաշատը
- 2) Վանաձորը և Սպիտակը
- 3) Սևանը և Վարդենիսը
- 4) Գյումրին և Հրազդանը

59 Արարատի մարզի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Բարձր է բնակչության միջին խտության ցուցանիշը:
- 2) Ամենամեծ քաղաքային բնակավայրը Արարատն է:
- 3) Տարածքի լեռնային մասը զբաղեցնում են Գեղամա լեռների լանջերը և Ուրծի ու Երանոսի միջին բարձրության լեռները:
- 4) Հարուստ չէ օգտակար հանածոների պաշարներով:

60 Ցեմենտի գործարաններ կան.

- 1) Արարատում և Հրազդանում
- 2) Երևանում և Աբովյանում
- 3) Արտաշատում և Արմավիրում
- 4) Գավառում և Մարտունիում

61 Արևմտյան Եվրոպայի տրված պետությունները դասավորել ըստ արևմուտքից արևելք հաջորդականության.

- 1) Ավստրիա
- 2) Շվեյցարիա
- 3) Լիխտենշտայն
- 4) Ֆրանսիա

62 Գրել այն երկրների համարները, որոնք առաջատար են խոզաբուծությամբ.

- |              |             |
|--------------|-------------|
| 1) Թուրքիա   | 5) Ճապոնիա  |
| 2) Հնդկաստան | 6) Չինաստան |
| 3) Ինդոնեզիա | 7) Պակիստան |
| 4) Իրան      | 8) Գերմանիա |

63 Գրել այն բնակավայրերի համարները, որոնք Գեղարքունիքի մարզում չեն.

- |                |             |
|----------------|-------------|
| 1) Բյուրեղավան | 5) Մարտունի |
| 2) Սևան        | 6) Վարդենիս |
| 3) Հրազդան     | 7) Սոթք     |
| 4) Դիլիջան     | 8) Ճամբարակ |

64 Գրել այն գետերի համարները, որոնք թափվում են Հնդկական օվկիանոս.

- |             |            |
|-------------|------------|
| 1) Սիրդարյա | 5) Զամբեզի |
| 2) Տիգրիս   | 6) Մուրեյ  |
| 3) Օրանժ    | 7) Ինդոս   |
| 4) Նիգեր    | 8) Մեկոնգ  |



(65-66) Նավը հս. լ. 36°30′-ի և արլ. ե. 50°-ի վրա է: Որոշել նրա հեռավորությունը (կմ-ով).

65 Հյուսիսային բևեռային շրջագծից:

66 Հարավային արևադարձից:

(67-68) Երկրի բնակչության թիվը 8 մլն է, բնական աճի գործակիցը՝ 6%: Տարվա ընթացքում ներգաղթը կազմել է 18 000 մարդ, արտագաղթը՝ 5 000 մարդ.

67 Որոշել բնակչության մեխանիկական աճը:

68 Որոշել բնակչության բացարձակ բնական աճը:

69

Օդի բացարձակ խոնավությունը 15 գ/մ<sup>3</sup> է: Օդը հագեցնելու համար անհրաժեշտ է 20 գ ջրային գոլորշի: Որոշել օդի հարաբերական խոնավությունը:

70

Հյուսիսային Ամերիկայի կլիմայի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.

- 1) Արկտիկական կլիմայական գոտում տեղումները քիչ են՝ 200-250 մմ:
- 2) Մայրցամաքը տարածվում է հյուսիսային մերձարևադարձային գոտուց մինչև մերձարկտիկական գոտի:
- 3) Բարեխառն գոտու ներքին շրջաններում կլիման ծովային է:
- 4) Լաբրադորյան և Կալիֆոռնիական սառը ծովային հոսանքները առափնյա շրջաններում առաջացնում են կլիմայի չորություն և օդի ջերմաստիճանի նվազում:
- 5) Գոլֆստրիմ տաք հոսանքը առաջացել է տոռնադոյի պատճառով:
- 6) Յուկատան թերակղզին գտնվում է արևադարձային կլիմայական գոտում: